

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման ցանկերով Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ

ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի «ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 275-Ն որոշմամբ նախատեսվել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից կատարել 2018 թվականի միջոցառումների ծրագրի 51-րդ, 52-րդ և գերակա խնդիրների 100-րդ, 101-րդ, 102-րդ կետերով նախատեսված միջոցառումները, որոնք ամբողջությամբ ներառվել են ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի «ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1030-Լ որոշման մեջ՝ համապատասխանաբար 277-րդ (նախկին՝ 51-րդ), 278-րդ (նախկին՝ 52-րդ), 276-րդ (նախկին՝ 100-րդ), 280-րդ (նախկին՝ 101-րդ), 288-րդ (նախկին՝ 102-րդ) կետերում, միաժամանակ նախատեսվել է 2018 թվականին (որից՝ նաև հետագա տարիներին շարունակվող) ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից կատարման ենթակա լրացուցիչ միջոցառումների ծրագիր հետևյալ կետերով՝ 274-րդ կետի 2-րդ ենթակետ, 275-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետեր, 287-րդ կետի 3-րդ ենթակետ, 291-րդ կետի 1-ին ենթակետ, որոնց իրականացման արդյունքների վերաբերյալ ներկայացվում է տեղեկատվություն:

ՏԵՂԵԿԱՆՔ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե	51 277	«ՀՀ հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության հողերի 2018 թվականի կադաստրային գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 403-Ն որոշում	
	52 278	Յուրաքանչյուր տարվա ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում	ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1119-Ն որոշում	
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը	
ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե	100 276	ՀՀ քաղաքների երկրատեղեկատվական համակարգի	Կատարվել են հետևյալ աշխատանքները. 1. Օրթոֆոտոհատակագծերի գրասենյակային և դաշտային մշակում, 2. Տեղագրական հատակագծի թվայնացում,	

		քարտեզագրական հիմքի ստեղծում	<ol style="list-style-type: none"> 3. Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ, 4. Բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ շերտերի ստեղծում, 5. Տեքստային տվյալների մուտքագրում տվյալների բազա, 6. Տեխնիկական տվյալների մուտքագրում տվյալների բազ 7. Թվայինական տվյալների մուտքագրում տվյալ 	
	101 280	ՀՀ տարածքում WGS-84 (ArmREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվադրանտի մոդելի ստեղծում	<p>Կատարվել են հետևյալ աշխատանքները.</p> <ol style="list-style-type: none"> 1. 249 GPS հիմնակետերի դիտարկում, կոորդինատների հավասարակշռում ու հաշվարկում, 2. II դասի 180.23 գծ. կմ նիվելիրացում, նյութերի մշակում և հավասարակշռում, 3. Քվադրանտի ստեղծման համար 1297 կետերի տվյալների հավաքագրում, բազայի ստեղծում, հաշվարկների կատարում, վերլուծություն, տրանսֆորմացիոն պարամետրերի որոշում: 	
	102 288	ՀՀ-ում միասնական տարածազնահատման նոր գոտևորման սահմանում	Մույն միջոցառման շրջանակում 914 բնակավայրերում անկախ գնահատողների կողմից իրականացվել է ՀՀ շուրջ 51300 միավոր անշարժ գույքերի շուկայական գնահատություններ, դրա և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից վերջին 5 տարիների փաստացի գործարքների պայմանագրային գների, ինչպես նաև անշարժ գույքի առաջարկի շուկայի տվյալների հիման վրա կատարվել են համապատասխան վերլուծություններ, որոնք տրամադրվել են	

			<p>ՀՀ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) և դրանց բարելավումների նոր գոտիավորման և բազային արժեքի որոշման աշխատանքներն իրականացնելու նպատակով հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությանը:</p>	
	274-րդ կետի 2-րդ ենթակետ	<p>Առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակների ընդլայնում (պայմանագրային գներ, միասնական տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ և այլն)</p>	<p>Մշակվել և էլեկտրոնային համակարգը սպասարկող կազմակերպությանն է տրամադրվել գրանցված գործարքների պայմանագրային գների և գործարքի վերաբերյալ այլ տեղեկությունների տրամադրման տեխնիկական առաջադրանքը, 2016, 2017 և 2018 թվականների իրատեսական գործարքների վերաբերյալ տվյալների մշակված բազաները: Տեղեկատվությունն առցանց տրամադրելու աշխատանքները փորձարկման և ներդնման փուլում են:</p>	
	275-րդ կետի 1-ին ենթակետ	<p>Պետական մարմիններից ստացվող դիմումների վերլուծություն՝ խմբավորված դասակարգում ըստ պահանջվող տեղեկատվության տեսակների</p>	<p>2018 թվականի ընթացքում կատարվել է պետական մարմիններից ստացվող գրությունների վերլուծություն, որի համաձայն՝ միայն Կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանում մուտքագրվել և ընթացք է տրվել 10120 գրությանը՝ 21238 անձի վերաբերյալ: Միևնույն ժամանակ առցանց եղանակով մուտքագրվել և ընթացք է տրվել ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության 331273 էլեկտրոնային որոշումներին և հարցումներին:</p>	

	275-րդ կետի 2-րդ ենթակետ	Ըստ յուրաքանչյուր պետական մարմնի նրանց անհրաժեշտ տեղեկատվության բացահայտում և սահմանում	Չորրորդ եռամսյակում գրություններ են հասցեագրվել և համատեղ մասնագիտական քննարկումներ են իրականացվել պետական մարմինների հետ՝ պահանջվող տեղեկատվությունը բացահայտելու, դասակարգումը սահմանելու համար: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ որոշ տեղեկատվության տեսակներ արդեն իսկ ներառված են «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգից (ARPIS) հասանելի տեղեկատվության ցանկում: Արդյունքում պետական մարմիններին առաջարկվել է իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար այսուհետ սահմանված կարգով դիմել «ԷԿԵՆԳ» ՓԲ ընկերությանը:	
	287-րդ կետի 3-րդ ենթակետ	Տեքստային տվյալների բազայի և էլեկտրոնային արխիվի ճշգրտում և ամբողջականացում (տեսաներածման աշխատանքներ)	2018 թվականի ընթացքում կատարվել են վերատեսաներածման աշխատանքներ, որի արդյունքում վերատեսաներածվել և թվայնացվել է 145840 կադաստրային գործ՝ 5539399 էջ:	
	288-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետեր	ՀՀ բոլոր համայնքներում անշարժ գույքի շուկայական գնահատություններ, Անշարժ գույքի շուկայական գնահատությունների տվյալների, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից վերջին 5 տարիների փաստացի	Մույն միջոցառման շրջանակում ՀՀ 914 բնակավայրերում անկախ գնահատողների կողմից իրականացվել է շուրջ 51300 միավոր անշարժ գույքերի շուկայական գնահատություններ: Այդ գնահատությունների և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից վերջին 5 տարիների փաստացի գործարքների պայմանագրային գների, ինչպես նաև անշարժ գույքի առաջարկի շուկայի տվյալների հիման վրա	

		գործարքների պայմանագրային գների, ինչպես նաև անշարժ գույքի առաջարկի շուկայի տվյալների վերլուծություններ	կատարվել են համապատասխան վերլուծություններ:	
	291-րդ կետի 1-ին ենթակետ	«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» «ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» «ՀՀ օրենքի նախագծի ներկայացում» «ՀՀ կառավարության քննարկմանը»	«ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» «ՀՀ կառավարության որոշման նախագիծը Կոմիտեի կողմից գրությամբ ներկայացվել է» «ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ միջոցառման ժամկետը երկարաձգելու առաջարկությամբ, որը գտնվում է ընթացքի մեջ:	

Ծանոթություն. ծրագրի՝

1. 279-րդ կետի 1-ին ենթակետով 2019 թվականի մարտի 3-րդ տասնօրյակում նախատեսվել է իրականացնել «Ինտեգրված (միասնական) կադաստրի ստեղծում» խորագրով միջոցառման հայեցակարգի մշակում, որը քննարկումների փուլում է և սահմանված ժամկետում կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

2. 285-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով 2019-2021 թվականների դեկտեմբերի 3-րդ տասնօրյակում նախատեսվել է իրականացնել «Համակարգի կառուցվածքային բարեփոխումներ և աշխատանքների արդյունավետության բարձրացում» խորագրով միջոցառումը, որի ուղղությամբ կատարվել է հետևյալը. ՀՀ վարչապետի 2018 թվականի նոյեմբերի 12-ի Ն 1500-Լ որոշմամբ Կոմիտեի համակարգում գործող վեց տարածքային ստորաբաժանումներից (որից՝ 2-ը Երևանում Երևանի տարածքային ստորաբաժանում, մարզերի միավորված ստորաբաժանում, 4-ը մարզերում՝ Շիրակ, Լոռի, Վայոց ձոր, Սյունիք) երեքը՝ Երևանի տարածքային ստորաբաժանումը, մարզերի միավորված ստորաբաժանումը և Վայոց ձորի ստորաբաժանումը, միաձուլման ձևով արդեն իսկ վերակազմակերպվել են Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման: Այնուհետև վերակազմակերպված 3 ստորաբաժանումների անշարժ գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակումների) պետական գրանցման, գույքի ու դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, արխիվային գործերի վարման և քարտեզագրական տվյալների համակարգման գործառույթները կառանձնացվեն և կներառվեն 3 հիմնական ուղղություններում, որոնք կտեղակայվեն տարբեր հասցեներում կամ նույնիսկ տարբեր քաղաքներում: Տվյալ հիմնական ուղղությունների գործառույթների իրականացման համար կստեղծվեն մասնագիտացված ստորաբաժանումներ, իսկ անհրաժեշտ շենքային պայմանների ապահովմանը զուգընթաց, տվյալ գործընթացը կտարածվի նաև մյուս 3 տարածքային ստորաբաժանումների վրա:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար՝
Մարիատ Պետրոսյան